ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«14» մայիսի 2019 թվականի № 105-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի հոկտեմբերի 17-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 91 և 2018 թվականի հունիսի 7-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 1394 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2019 թվականի մայիսի 7-ի թիվ Ֆ-121/19 գրությունը, «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊ ընկերության 2019 թվականի ապրիլի 30-ի գրությունը և Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.«ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 12 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/601 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգհովտի բազալտի հանքավայրը 1.X=4534386 Y=8402174 2.X=4534374 Y=8402215 3.X=4534291 Y=8402221 4.X=4534294 Y=8402217 5.X=4534300 Y=8402218 6.X=4534302 Y=8402210 7.X=4534310 Y=8402215 8.X=4534321 Y=8402209 9.X=4534328 Y=8402196 10.X=4534338 Y=8402190 11.X=4534359 Y=8402188 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տեղամասում արդյունահանում կատարելու համար, տրամադրելով՝ 16280 մ^3 բազալտի պաշար և լեռնահատկացման թիվ Լ-601 ակտը՝ 1.X=4534386 Y=8402174 2.X=4534386 Y=8402130 3.X=4534430 Y=8402132 4.X=4534377 Y=8402238 5.X=4534291 Y=8402221 6.X=4534210 Y=8402191 7.X=4534210 Y=8402164 8.X=4534248 Y=8402164 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ

ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 1.13 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 1360 մ³ բազալտի պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -601 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգհովտի բազալտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ- 601 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող Հակոբ Վարդանյանին:

5/14/2019

VERIFIED OCSP 5/14/2019 18:35:24 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ